ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «27» 01 2018թ. № 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵՄ) ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔՈ «ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ և 13-րդ կետի «ա» ենթակետով, ինչպես նաև Եվրոպական Միության արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգին Հայաստանի մասնակցության և դրա հետ կապված դիտանցման գործընթացներին առնչվող աշխատանքների կազմակեպման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. *Հաստատել* Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության (ԵՄ) արտոնությունների ընդհանրացված համակարգի ներքո «Գրանցված արտահանողների համակարգի» (այսուհետ REX համակարգ) կիրառման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սահմանել, որ
   1) REX համակարգում արտահանողների գրանցման տեղական կառավարիչ է հանդիսանում Եվրոպական Միության և Առևտրի համաշխարահային կազմակերպության վարչության պետը:
   2) Եվրոպական Հանձնաժողովի N 2015/2447 իրականացման կանոնակարգի N 22-06 հավելվածով սահմանված հայտերը REX համակարգի կիրառման կարգով նախատեսված դեպքերում ստորագրվում են Եվրոպական Միության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչության պետի կողմից և հաստատվում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության եռալեզու անվանմամբ և Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիքով:

3. Եվրոպական Միության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչությանը՝ Լիցենզավորման և թույլտվությունների գործակալության հետ համատեղ՝ REX համակարգի ամբողջական և արդյունավետ կիրառման ապահովման նպատակով իննամսյա ժամկետում մշակել իրավական ակտերի անհրաժեշտ փոփոխությունների փաթեթ:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման
և ներդրումների նախարարի
2018 թվականի հունվարի 17-ի
N 56-Ա հրամանի

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության (ԵՄ) արտոնությունների ընդհանրացված համակարգի ներքո «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառման

I. Ընդհանուր դրույթներ

1. REX համակարգը հանդիսանում է ԵՄ արտոնությունների ընդհանրացված համակարգի (այսուհետ՝ ԱԸՀ) բաղկացուցիչ մաս և Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է 2018 թվականի հունվարի 1-ից:

2. ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1772-Ն որոշմամբ սահմանված ԵՄ արտահանման նպատակով ապրանքների ծագման հավաստագրման համակարգը, կշարունակի գործել սահմանված կարգով մինչև անցումային փուլի ավարտը՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. REX համակարգի ներքո, 6000 եվրոն գերազանցող արժողությամբ և ԵՄ արտոնությունների ընդհանրացված համակարգից օգտվող ապրանքների ցանկացած խմբաքանակ ԵՄ արտահանելիս պետք է ուղեկցվի REX համակարգում գրանցված արտահանողի կողմից տրված ապրանքի ծագման մասին հայտարարությամբ՝ որը դրվում է արտահանողի և ստացողի լրիվ անվանումը և հասցեն պարունակող ցանկացած առևտրային փաստաթղթի վրա: Ապրանքի ծագման մասին հայտարարության տեքստը սահմանված է Եվրոպական Հանձնաժողովի N 2015/2447 իրականացման կանոնակարգի N 22-07 հավելվածով:

4. Մինչև 6000 եվրո արժողությամբ ցանկացած խմբաքանակի ԵՄ արտահանման դեպքում արտահանողներն իրավասու են առանց REX համակարգում գրանցվելու ներկայացնել հաշիվ-ապրանքագրի հայտարարություն՝ Եվրոպական Հանձնաժողովի N 2015/2447 իրականացման կանոնակարգի N 22-09 հավելվածով սահմանված ձևով:

5. REX համակարգից օգտվելու և ապրանքի ծագման մասին հայտարարությամբ ապրանքներ արտահանելու նպատակով՝ ՀՀ արտահանողները պետք է գրանցվեն REX համակարգում՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ներկայացնելով Եվրոպական Հանձնաժողովի N 2015/2447 իրականացման կանոնակարգի N 22-06 հավելվածով սահմանված հայտը:

II. REX համակարգի իրավասու մարմինները, իրավունքներն ու պատասխանատվությունները

6. REX համակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում գործում է երկու իրավասու մարմին.

1) Գրանցման համար իրավասու մարմին՝ պատասխանատու է արտահանողների գրանցման և անհրաժեշտ աջակցության տրամադրման համար,

2) Վարչական համագործակցության մարմին՝ պատասխանատու է Եվրոպական հանձնաժողովի, ինչպես նաև անդամ երկրների մաքսային մարմինների հետ համագործակցության համար:

7. Նշված իրավասու մարմինները պետք է ունենան առնվազն մեկ տեղական կառավարիչ՝

1) գրանցման համար

2) վարչական համագործակցության համար

8. Յուրաքանչյուր տեղական կառավարիչ կարող է նշանակել համակարգի օգտատերեր՝ համապատասխան գրանցում կատարելով REX համակարգում՝ նրանց ԵՄ մուտքի անհատականացման համարի միջոցով (EU login): Գրանցումը կատարվում է REX-ի ենթահամակարգ հանդիսացող T-REX համակարգի միջոցով: Գրանցման համար պատասխանատու տեղական կառավարիչը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն նոր օգտատերերին՝ արտահանողներին REX համակարգում գրանցելու և համակարգից օգտվելու նպատակով:

9. Գրանցման համար պատասխանատու տեղական կառավարիչը վարում և պահպանում է գրանցված օգտատերերի վերաբերյալ թարմացված տվյալների էլեկտրոնային բազա՝ ներառելով առնվազն հետևյալ տվյալները՝ անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, դիմումի ստացման ամսաթիվ, REX համակարգում գրանցման համար՝ ամսաթիվ, տնտեսվարողին գրանցման վերաբերյալ տեղեկացման ամսաթիվ, տնտեսվարողին REX համակարգից հանելու ամսաթիվ և հիմնավորում:

III. Արտահանողների գրանցում REX համակարգում

10. REX համակարգում արտահանողների գրանցումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության

վարչությունը (գրանցման համար իրավասու մարմին)՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:

11. Արտահանողների գրանցումը REX համակարգում անվճար է:

12. REX համակարգում գրանցվելու նպատակով արտահանողը լրացնում, ստորագրում և թղթային տարբերակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն է ներկայացնում Եվրոպական Հանձնաժողովի N 2015/2447 իրականացման կանոնակարգի N 22-06 հավելվածով սահմանված հայտը:

13. Արտահանողի կողմից, պարտադիր կարգով, լրացվում է միայն հայտի 1-5 բաժինները: 6-րդ բաժինը լրացվում է, եթե տնտեսվարողը համաձայն է իր տվյալների հրապարակմանը:

14. Նախքան գրանցման իրականացումը, գրանցման համար իրավասու մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է, թե արդյոք՝

1) հայտն ամբողջությամբ լրացված է,

2) ներկայացված տվյալները (կազմակերպությունը գրանցումը, հասցեն և այլն) ճիշտ են, հայտատուն արտադրական կամ առևտրային գործունեությամբ զբաղվող կազմակերպություն է (այլ ոչ թե մաքսային կամ հարկային գործակալ),

3) հայտատուն սնանկ չէ կամ չի գտնվում սնանկացման գործընթացում:

15. Հայտն ամբողջությամբ լրացված չլինելու կամ անճշտություններ հայտնաբերելու դեպքում՝ գրանցման համար իրավասու մարմինը հայտատուին գրավոր (կամ անհրաժեշտության դեպքում՝ էլ. փոստով) տեղեկացնում է հայտնաբերված թերությունների մասին՝ առաջարկելով ուղղել հայտը և ներկայացնել նոր հայտ:

16. Բոլոր անհրաժեշտ ճշգտումներն իրականացնելուց հետո, հայտի վերջնական տարբերակի հիման վրա, գրանցման համար իրավասու մարմինը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտատուին գրանցում է REX համակարգում, տրամադրում է REX համակարգի գրանցման համար և կատարում է անհրաժեշտ նշումներ հայտի 7-րդ բաժնում:

17. REX համակարգում արտահանողի գրանցման համարը պետք է լինի չկրկնվող՝ նույն համարը չի կարող տրամադրվել այլ արտահանողներին:

18. REX համակարգում գրանցման համարը բաղկացած է առավելագույնը 30 և նվազագույնը 11 նիշից և ունի հետևյալ կառուցվածքը՝ Հայաստանի միջազգային կոդը (AM), «REX» հապավումը և իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը՝ օրինակ AMREX00000001

19. REX համակարգում արտահանողի գրանցումից հետո արտահանողների գրանցման տեղական կառավարիչը լրացնում է հայտի 7-րդ բաժինը, ստորագրում և կնքում է այն:

20. REX համակարգում արտահանողի գրանցումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը արտահանողին պաշտոնապես գրավոր կարգով տեղեկացնում է գրանցման մասին՝ նշելով REX համակարգում գրանցման համարը, գրանցման ամսաթիվը և REX համակարգում արտահանողի գրանցման ուժի մեջ մտնելու ամսաթիվը: REX համակարգում գրանցման վերաբերյալ արտահանողին ուղղված գրության լուսապատճենը պահվում է գրանցման համար իրավասու մարմնում և կարող է ուղարկվել արտահանողին նաև էլ. փոստի միջոցով:

21. REX համակարգում արտահանողի գրանցման ուժի մեջ մտնելու ամսաթիվը հայտի վերջնական տարբերակը գրանցման համար իրավասու մարմին մուտք լինելու օրն է:

IV. REX համակարգում գրանցված արտահանողների տվյալների կառավարում

22. Գրանցման համար իրավասու մարմինը պատասխանատու է REX համակարգում գրանցված արտահանողի տվյալների թարմացման համար: Այդ նպատակով գրանցման համար իրավասու մարմինը պարտավոր է արտահանողի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա համակարգում անմիջապես կատարել տվյալների թարմացում:

23. Արտահանողը պարտավոր է իր տվյալների փոփոխության մասին անմիջապես գրավոր կարգով ծանուցել գրանցման համար իրավասու մարմնին:

24. Տվյալների թարմացումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գրանցման համար իրավասու մարմինը գրավոր տեղեկացնում է արտահանողին այդ մասին:

V. REX համակարգում գրանցված արտահանողների տվյալների չեղարկում

25. Գրանցման համար իրավասու մարմինը չեղարկում է արտահանողի գրանցումը REX համակարգում, եթե՝

1) արտահանողը դադարեցրել է իր գործունեությունը կամ լուծարվել է,

2) արտահանողն այլևս չի բավարարում ԱԸՀ առևտրային ռեժիմով սահմանված ապրանքների արտահանման պահանջներին,

3) արտահանողը գրավոր տեղեկացրել է, որ այլևս մտադիր չէ ապրանքներ արտահանել ԱԸՀ շրջանակներում,

4) արտահանողը կանխամտածված կերպով ներկայացրել է ոչ ճշգրիտ տեղեկատվություն պարունակող ապրանքի ծագման մասին հայտարարություն, ինչը հանգեցրել է արտոնյալ առևտրային ռեժիմից օգուտների ստացման:

26. Գրանցման համար իրավասու մարմինը կարող է չեղարկել արտահանողի գրանցումը REX համակարգում, եթե վերջինս չի ծանուցել իր գրանցման տվյալների թարմացման մասին:

27. Գրանցման համար իրավասու մարմինը չեղարկումն իրականացնելուց անմիջապես հետո գրավոր կարգով տեղեկացնում է արտահանողին REX համակարգում վերջինիս գրանցումը չեղարկելու մասին: Չեղարկման վերաբերյալ տեղեկատվությունն արտահանողին ուղարկվում է նաև էլեկտրոնային տեսքով:

28. Չեղարկված արտահանողի գրանցման համարը չի կարող կրկին օգտագործվել նոր արտահանող գրանցելու նպատակով:

29. Գրանցման համար իրավասու մարմինը կարող է վերականգնել չեղարկված գրանցումը միայն վարչական վերադասության կարգով բողոքարկվելու դեպքում, կամ եթե չեղարկումն իրականացվել է սխալմամբ: Այս դեպքում վերականգնվում է նաև արտահանողին տրված նախկին գրանցման համարը:

30. REX համակարգում գրանցումը չեղարկված արտահանողը կարող է դիմել համակարգում կրկին գրանցվելու նպատակով: Արտահանողի վերագրանցումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ չեղարկման հիմքերը վերացել են: REX համակարգում կրկին գրանցելու դեպքում վերջինիս տրվում է նոր գրանցման համար: Նոր գրանցման համարը բաղկացած է առավելագույնը 30 և նվազագույնը 11 նիշից և ունի հետևյալ կառուցվածքը՝ Հայաստանի միջազգային կոդը (AM), «REX» հապավումը. իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և լատինական այբուբենի համապատասխան տառը (մեծատառ)՝ այբբենական կարգով՝ օրինակ AMREX00000001A:

VI. Վարչական համագործակցության իրականացումը

31. Վարչական համագործակցությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Լիցենզավորման և թույլտվությունների գործակալությունը (վարչական համագործակցության համար իրավասու մարմին):

32. ԱԸՀ շրջանակներում, վարչական համագործակցության համար իրավասու մարմինն իրականացնում է արտահանողի կողմից տրված ծագման հայտարարությամբ նշված ապրանքների ծագման կարգավիճակի հավաստիացում՝

1) Եվրոպական հանձնաժողովի կամ ԵՄ անդամ երկրների մաքսային մարմինների կողմից ներկայացված ապրանքների ծագման կարգավիճակի հավաստիացման հարցումների դեպքում,

2) սեփական նախաձեռնությամբ՝ ռիսկերի գնահատման հիման վրա:

33. Ապրանքի ծագման կարգավիճակի հավաստիացման նպատակով արտահանողների կամ ծագման հայտարարությունների ընտրությունը պայմանավորված չէ ապրանքի տեսակից, ոլորտից կամ ներմուծման երկրից: Այն իրականացվում է միայն ռիսկերի գնահատման հիման վրա, որտեղ սակայն այդ գործոնները կարող են հաշվի առնվել: Վարչական համագործակցության համար իրավասու մարմինը պարտավոր է մշակել ռիսկերի գնահատման չափանիշներ և դրանց հիման վրա որոշել ապրանքի ծագման կարգավիճակի հավաստիացման աշխատանքների հաճախականությունը:

34. Ապրանքի ծագման հավաստիացման հարցման պատասխանը վարչական համագործակցության համար իրավասու մարմինը հայցող կողմին է ներկայացնում հարցումը ներկայացնելու օրվանից 6-ամսյա ժամկետում: Եթե վարչական համագործակցության համար իրավասու մարմնի կողմից հավաստիացնող պատասխանն ուղարկելուց հետո ԵՄ կողմի համար այդ պատասխանում ներառված տեղեկատվությունը բավարար չէ, ինչպես նաև այլ հիմնավոր կասկածների պարագայում լրացուցիչ հարցում ստանալու դեպքում վարչական համագործակցության համար իրավասու մարմինը պատասխանը հայցող կողմին տրամադրում է լրացուցիչ հարցումը ստանալուց հետո 6-ամսյա ժամկետում:

35. Ապրանքի ծագման կարգավիճակի հավաստումն իրականացվում է իրավասու մարմնի գրավոր տեղեկացումը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով) ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում արտահանողի/արտադրողի կողմից իրավասու մարմին ներկայացված փաստաթղթերի կամ, դրանց ոչ բավարար լինելու դեպքում, արտահանողի/արտադրողի արտադրատարածք իրականացված այցելությունների հիման վրա: Ապրանքի ծագման կարգավիճակի հավաստման նպատակով վարչական համագործակցության համար իրավասու մարմինը՝

1) ուսումնասիրում է այն ապրանքների կամ նյութերի ապրանքի ծագման մասին հայտարարությունները, որոնց վերաբերյալ ստացվել են հարցումներ Եվրոպական հանձնաժողովից կամ ԵՄ անդամ երկրներից,

2) ուսումնասիրում է մատակարարների կողմից տրված հիմնավորող փաստաթղթերը, որով կհավաստվի այդ ապրանքների և նյութերի ծագման երկիրը, որը հայկական արտահանողը/արտադրողը գնել է այլ կազմակերպությունից,

3) համեմատում է տվյալ նյութի կամ ապրանքի մասով արտահանողի առևտրային շարժն արտահանողի կողմից ներկայացված հաշվապահական փաստաթղթերի հետ:

36. Վարչական համագործակցության համար իրավասու մարմինն իր ուսումնասիրությունների իրականացման համար կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, հարկ եղած դեպքում դիմելով համապատասխան մարմիններին՝ պահանջվող տեղեկատվությունը ստանալուն աջակցելու համար:

Իրավասու մարմնի գործողությունները չպետք է խոչընդոտեն տնտեսվարողի բնականոն աշխատանքին:

37. Վարչական համագործակցության կամ ծագման հսկողության դրույթներն օգտագործվում են նաև ԵՄ-ից դեպի շահառու երկիր երկկողմանի միասնականացման (cumulation) նպատակով արտահանումներին և շահառու երկրից դեպի այլ շահառու երկիր տարածաշրջանային միասնականացման նպատակով արտահանումներին:

38. Տարածաշրջանային միասնականացումը կարգավորում է, որ միևնույն տարածաշրջանային խմբի մեջ գտնվող երկրները ձեռնամուխ լինեն վարչական համագործակցությանը՝ հետևելով ապրանքների ծագմանն առնչվող GSP կանոնների ապահովմանը ինչպես ԵՄ նկատմամբ, այնպես էլ միմյանց: Տարածաշրջանային քարտուղարությունը կամ այլ միասնական մարմին, որը ներկայացնում է խմբի անդամներին որևէ հարցում, պետք է ծանուցի ԵՄ հանձնաժողովին տվյալ հանձնառությունների վերաբերյալ:

39. Միջտարածաշրջանային կամ ընդլայնված միասնականացումը հնարավոր է միայն, եթե դրանք հարցման արդյունքում հաստատվել են ԵՄ հանձնաժողովի պաշտոնական ակտով և հրապարակվել ԵՄ պաշտոնական ամսագրում: Այս դեպքում խմբի անդամ երկրները պետք է նույնպես աջակցեն ծագման աղբյուր հանդիսացող երկրին վարչական համագործակցության հարցում այնպես, ինչպես նրանք կաջակցեին ԵՄ անդամ երկրների մաքսային մարմիններին դեպի ԵՄ ապրանքների ուղղակի արտահանման դեպքում: